

Կարծիք

պաշտոնական ընդդիմախոսի՝ Երևանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի ԵՊԲՀ Հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր, բ.գ.դ. Մարինե Գևորգի Հովհաննիսյանի Մերի Աշոտի Մխիթարյանի «Աուտիզմի սպեկտրի խանգարման պրենատալ, պերինատալ և գենետիկ որոշ ռիսկի գործոնների գնահատականը» թեմայով, ԺԴ.00.17 «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքի արդիականություն.

Սույն ատենախոսությունն անդրադառնում է աուտիզմի սպեկտրի խանգարման (ԱՍԽ) պրենատալ, պերինատալ և գենետիկ ռիսկի գործոնների համակողմանի վերլուծությանը՝ նպատակ ունենալով խորացնել մեր պատկերացումները ԱՍԽ-ի առաջացման հիմքում ընկած գենետիկական և միջավայրային գործոնների մասին:

ԱՍԽ-ն ներկայումս ճանաչվում է որպես նյարդազարգացման ամենատարածված խանգարումներից մեկը, որի տարածվածության աճը վերջին տասնամյակներում արձանագրել է զգալի թափ: Այս միտումը ԱՍԽ-ն վերածել է հանրային առողջապահության լուրջ մարտահրավերի՝ ընդգծելով այն որպես առաջնահերթ խնդիր ինչպես առողջապահական, այնպես էլ կրթական և սոցիալ-քաղաքական քաղաքականությունների շրջանակում:

ԱՍԽ-ի ռիսկի գործոնների խորացված ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս նպաստել կանխարգելիչ միջոցառումների, վաղ ախտորոշման գործիքակազմի և առավել արդյունավետ միջամտական ռազմավարությունների մշակմանը: Այս առումով ներկայացվող աշխատանքը կարևոր ներդրում է հանրային առողջության և առողջապահության զարգացման գործում՝ բացահայտելով այն գործոնները, որոնք կարող են նպաստել խանգարման վաղ հայտնաբերմանը և աջակցել արդյունավետ աջակցման քաղաքականությունների մշակմանը:

Ներկայացվող թեկնածուական թեզը ներկայացնում է գիտականորեն հիմնավորված, արդիական և կիրառական արժեք ունեցող հետազոտություն:

Ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների հիմնավորումը

Ատենախոսությունում ներկայացված գիտական դրույթները հստակ ձևակերպված են, փաստարկված համապատասխան հետազոտական տվյալներով և համապատասխանաբար կառուցված գիտական տրամաբանությամբ: Դրանցից յուրաքանչյուրն արտացոլում է թեկնածուի գիտական մտածողությունը, տեսական դիրքորոշումն ու մեթոդաբանական կշռադատվածությունը:

Եզրակացությունները լիարժեք համապատասխանում են հետազոտության նպատակներին և առաջադրված խնդիրներին, իսկ գործնական առաջարկությունները կրում են կիրառական ուղղվածություն՝ հնարավոր դարձնելով դրանց ներդրումը համապատասխան պրակտիկ դաշտում, մասնավորապես՝ հանրային առողջության և առողջապահության ոլորտում:

Թեկնածուի կողմից ընտրված և կիրառված հետազոտական մեթոդները լիովին համահունչ են թեմայի բնույթին: Դրանք ժամանակակից են, մեթոդաբանական առումով հիմնավորված և ապահովում են բավարար տեղեկատվություն գիտական վերլուծությունների իրականացման համար: Հենց այս մեթոդների շնորհիվ հեղինակին հաջողվել է լիարժեքորեն լուծել աշխատանքում ձևակերպված գիտական խնդիրները: Վերոնշյալ դիտարկումների հիման վրա կարելի է հանգել հետևյալ եզրակացությանը. իրականացված հետազոտությունը կատարվել է ամբողջական և համակարգված ձևով՝ օգտագործելով բավարար քանակությամբ և որակով հետազոտական նյութ: Վերլուծված տվյալների ծավալն ու խորությունը պայմանավորել են ատենախոսությունում ձևակերպված գիտական դրույթների, եզրակացությունների և առաջարկությունների բարձր հուսալիությունը և վավերականությունը:

Ատենախոսության կառուցվածքի համապատասխանությունը Բարձրագույն Կրթության և Գիտության Կոմիտեի պահանջներին

Ատենախոսությունը ներկայացված է հայերեն լեզվով, ունի 131 էջ ծավալ և բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից՝ ներածություն, գրականության տեսություն, հետազոտության նյութը և մեթոդները, հետազոտության արդյունքները և

դրանց քննարկումը, ամփոփում, եզրակացություններ, առաջարկություններ: Գրականության ցանկը կազմված է 180 սկզբնաղբյուրից: Աշխատանքին կցված է նաև հավելված, որը ընդգրկում է 10 էջ: Հետազոտության արդյունքները ներկայացված են հստակ կառուցվածքով և պատկերավորությամբ՝ օգտագործելով 4 նկար և 16 աղյուսակ, որոնք նպաստում են տվյալների վերլուծության հասկանալի և դիտարկելի ներկայացմանը: Ատենախոսությունում ձևակերպված եզրակացությունները լիովին համապատասխանում են առաջադրված գիտական խնդիրներին և բխում են իրականացված ուսումնասիրությունների ամբողջական և հիմնավոր վերլուծությունից: Դրանք տրամաբանական են, փաստարկված և վստահելի, իսկ դրանց ճշգրտությունը կասկածի տեղիք չի տալիս:

Ներկայացված գիտական աշխատանքը արժանի է բարձր գնահատականի՝ թե՛ մեթոդաբանական հստակության, թե՛ բովանդակային խորության, և թե՛ գործնական նշանակության տեսանկյունից: Աշխատության գիտագործնական արժեքը հատկապես կարևոր է հանրային առողջապահական ծրագրերի համատեքստում՝ աուտիզմի սպեկտրի խանգարման վաղ ախտորոշում և հայտնաբերում, մայրական և մանկական առողջության բարելավում, սոցիալական աջակցության բարելավում, ինչպես նաև նոր կանխարգելիչ մոտեցումների մշակում:

Ատենախոսությունում ներկայացված գործնական առաջարկությունները ունեն զգալի կիրառելիություն հանրային առողջության և առողջապահության ոլորտներում՝ նպաստելով կանխարգելիչ քաղաքականությունների ձևավորմանը և առողջապահական միջամտությունների բարելավմանը:

Իրականացված գիտական ուսումնասիրության արդյունքները պատշաճ կերպով արտացոլված են հինգ գիտական հրատարակումներում, որոնցից մեկը՝ տեղական, իսկ չորսը՝ միջազգային բարձր վարկանիշ ունեցող պարբերականներում, ներառված Web of Science (WoS) գիտաչափական շտեմարանում: Միջազգային հրատարակումները հրապարակված են ազդեցության գործակից ունեցող Q1 և Q2 մակարդակների գիտական ամսագրերում, ինչը վկայում է հետազոտության գիտական արժեքի, նորության և հեղինակության միջազգային ճանաչման մասին:

Սեղմագիրը լիովին համահունչ է ատենախոսության բովանդակությանը, ճշգրտորեն արտացոլում է ուսումնասիրված թեմայի հիմնական գիտական արդյունքները, պաշտպանությանը ներկայացվող դրույթները, ինչպես նաև գործնական առաջարկությունները: Այն կազմված է ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲԿԳԿ) կողմից սահմանված ձևաչափային և բովանդակային պահանջներին համապատասխան:

Գրախոսվող ատենախոսության վերաբերյալ սկզբունքային կամ հիմնարար դիտողություններ չկան: Ներքոհիշյալ նկատառումները և հարցերը վերաբերում են մասնակի հստակեցումների անհրաժեշտությանը, որոնք, սակայն, չեն նվազեցնում աշխատանքի գիտական արժեքը և չեն խաթարում դրա ընդհանուր որակական մակարդակը:

1. Աշխատանքում նշվում է, որ ԱՍԽ-ը դիտարկվել է ընդհանուր ձևով: Արդյո՞ք փորձ է արվել գնահատել ախտանիշների ծանրության (mild–severe spectrum) հնարավոր կապը ռիսկի գործոնների հետ:
2. Արդյո՞ք փորձ է արվել տարբերակել, թե որ պրեն- և պերինատալ գործոններն են գործում անկախ գենետիկական ազդեցությունից:
3. Աշխատանքում նշված են մի շարք կոնկրետ գեներ՝ SHANK2, SHANK3, և քրոմոսոմային տարածքներ՝ 15q11–15q13, 16p11, 11q13: Արդյո՞ք Հայաստանի պոպուլյացիայում հայտնաբերված գենետիկական տարբերությունները համընկնում են միջազգային տվյալների հետ:
4. Արդյո՞ք կատարված հետազոտությունը տալիս է հիմք պնդելու, որ այս գենետիկական գործոնները կարող են ներառվել ԱՍԽ-ի սքրինինգային կամ կանխատեսիչ մոդելների մեջ:

Եզրակացություն.

Այսպիսով, ԺԴ.00.17 «Հանրային առողջություն և առողջապահության կազմակերպում» մասնագիտությամբ բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման նպատակով ներկայացված Մերի Աշոտի Մխիթարյանի «Աուտիզմի սպեկտրի խանգարման պրենատալ, պերինատալ և գենետիկ որոշ ռիսկի գործոնների

գնահատականը» թեմայով ատենախոսությունը հանդիսանում է գիտագործնական նշանակություն ունեցող լիարժեք գիտական հետազոտություն:

Ատենախոսությունը պարունակում է ակնհայտ գիտական նորույթ, մեթոդաբանական հիմնավորվածություն և գործնական կիրառելիություն, լիովին համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ-ի 7-րդ կետի պահանջներին:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ աշխատանքը կարող է ներկայացվել գիտական խորհրդի պաշտպանությանը, իսկ հեղինակը՝ Մերի Աշոտի Մխիթարյանը, արժանի է բժշկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհման:

Պաշտոնական ընդդիմախոս՝

ԵՊԲՀ Հիգիենայի և էկոլոգիայի ամբիոնի պրոֆեսոր  Բ.Գ.Պ. Մ.Գ.Հովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոս
ստորագրությունը հաստատում եմ:

պրոֆ. Մարինե Գևորգի Հովհաննիսյանի

ԵՊԲՀ գիտական քարտուղար



Բ.Գ.Պ. պրոֆեսոր Տ.Գ.Ավագյան

06.10.2025թ.